ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՆԱՉ, ԱՆՑՈՒՄԱՅԻՆ և ՆՊԱՍՏՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ (ՏԱՔՍՈՆՈՄԻԱՆ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Foundation to Save Energy - Armenia 28.03.2025 19:42:45	Տեքստի թարգմանության մեջ որոշ անգլերեն տերմիններ թերի են թարգմանված, օրինակ "Scope 1, 2, 3 GHG Inventories" թարգմանված է "1-3 տարածքների համար, ջերմոցային գազերի հաշվառման աստիճանական իրականացում"...	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն:	
2	Ա.Դ.Սախարովի անվան մարդու	8. Մեկ այլ էական բաց է գյուղմթերքի սպառման և իրացման շուկաների խնդիրը:	Շնորհակալություն առաջարկության համար:	

	իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ 28.03.2025 12:47:24	Տնտեսավարողների մոտ բացակայում է շուկայական կանխատեսելիություն, ինչն իր հերթին ազդում է արտադրության ծավալների, տեսականու և որակի վրա: Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը հաճախ հիմնված է միջնորդների վրա, ինչը խիստ կրճատում է վերջնական եկամուտը: Առաջարկվում է տաքսոնոմիայի «նպաստող» միջոցառումների շարքում ավելացնել այնպիսի ուղղություններ, որոնք վերաբերում են՝ սպառման շուկաների մոդելավորմանը, մարքեթինգային խթաններին, ինչպես նաև պետական միջամտությամբ իրականացվող գնման ծրագրերին:	Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն և կքննարկվի:	
3	Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ 28.03.2025 12:47:24	7. Տաքսոնոմիայի նախագծում գյուղատնտեսական հատվածը ներկայացված է որպես մի շարք ենթաոլորտների միություն՝ մշակաբույսերի աճեցում, հողօգտագործում, անասնաբուծություն, ոռոգում և այլն: Սակայն հատվածը շարադրված է ոչ թե համակարգային ռազմավարությամբ, այլ հիմնականում առանձին գործողությունների	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն և կքննարկվի:	

		տեսքով, որոնք ներկայացված են որպես «անհրաժեշտ միջոցառումներ»: Սույն ձևակերպումները («գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների աշխատուժի արդյունավետության բարձրացում», «հողերի ռեկուլտիվացիա», «կերի մարսողության բարելավում») օգտակար են նպատակային ցուցիչների մակարդակում, սակայն պահանջում են հստակ համակարգային ռազմավարություն: Առաջարկվում է գյուղատնտեսական ենթաբաժնում ընդգծել հիմնական մարտահրավերները և սահմանել միջոլորտային լուծումներ: Այդ թվում՝ կապել արտադրության բնապահպանական կայունությունն ու արտադրողականությունը հետվաճառքային շուկաների, պահեստավորման ենթակառուցվածքների, տեղափոխման արդյունավետության և սպառման համակարգերի հետ:		
4	Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական	6. Ներկայումս «Կ», «Ա» և «Ն» դասակարգման սահմանումները ընդհանուր են, սակայն որոշ դեպքերում սահմանազատումը կարող է երկիմաստ լինել: Օրինակ՝ որոշ նախագծեր, որոնք	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն և կքննարկվի:	

	կենտրոն ՀԿ 28.03.2025 12:47:24	դասակարգվում են որպես «անցումային», կարող են ունենալ նույն բնութագիրը, ինչ «կանաչ» նախագծերը, սակայն չունեն համապատասխան չափելի արդյունքներ: Նպատակը պետք է լինի դասակարգման հստակեցումը և հավասար կիրառման ապահովումը: Առաջարկվում է՝ յուրաքանչյուր դասակարգման համար մշակել գնահատման հստակ մեթոդաբանություն, որը ներառում է չափելի ազդեցության, տեխնոլոգիական բնույթի և ռազմավարական նպատակի հետ կապի ցուցիչներ: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել անցումային նախագծերի «կանաչացման ճանապարհային քարտեզ»՝ տարեսկզբյան արդյունքների, ներդրումային ցուցանիշների և տեխնիկական բարելավումների միջոցով:		
5	Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ 28.03.2025	5. Չնայած նախագիծը հղում է անում միջազգային ֆինանսական հաստատություններին և ներդրումային գրավչությանը, բացակայում է մեխանիզմ, որով տաքսոնոմիայի շրջանակով ընտրված ծրագրերը կստանան ֆինանսավորման առավելություն կամ արտոնություններ:	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն և կքննարկվի:	

	12:47:24	Նպատակը պետք է լինի համակարգի ֆինանսական խթանումը և ներդրումների ուղղորդումը կայուն ծրագրերին: Առաջարկվում է՝ մշակել կանոնակարգ, որի համաձայն Կ և Ա դասակարգում ունեցող ծրագրերը ստանում են առավելություններ պետական բյուջետային ծրագրերում, միջազգային դոնորների կողմից, ինչպես նաև կարող են ընդգրկվել արտոնյալ վարկավորման կամ պետական երաշխիքների մեխանիզմում:		
6	Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ 28.03.2025 12:47:24	4. Թեև նախագծում նշվում է, որ «շահառուների շրջանակը ներառում է պետական կառավարման և ՏԻՄ մարմիններ, միջազգային ֆինանսական հաստատություններ և մասնավոր հատված», այնուամենայնիվ գործընթացում քաղաքացիական հասարակության և տեղական համայնքների մասնակցության ձևաչափը հստակեցված չէ: Նպատակը պետք է լինի տաքսոնոմիայի նկատմամբ հանրային վերահսկողության և մասնակցային մշակույթի ձևավորումը: Այդ նպատակով անհրաժեշտ է նախագծում ներառել պարտադիր դրույթ, ըստ որի՝	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն:	

		տարեկան առնվազն մեկ բաց խորհրդակցություն կազմակերպվի շահառու խմբերի մասնակցությամբ՝ քննարկելու քաղաքականության ընթացքն ու նոր առաջարկները: Բացի այդ, կարելի է նախատեսել շահառուների մասնակցությամբ մշտադիտարկման զեկույցների հրապարակման մեխանիզմ:		
7	Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ 28.03.2025 12:47:24	3. Նախագծում կան գործունեության տեսակներ, որոնք ունեն բարդ ու հակասական բնույթ կանաչության տեսանկյունից: Օրինակ՝ «Հայաստանի ատոմային էլեկտրակայանի շահագործման ժամկետի երկարաձգումը» ներկայացվում է որպես կանաչ (Կ) այն դեպքում, երբ բավարարում է մի շարք տեխնիկական պահանջներ: Չնայած որոշումները հիմնավորված են տեխնոլոգիական անվտանգությամբ, նման ձևակերպումը հանրային մակարդակում կարող է ընկալվել որպես կանաչ լվացում (greenwashing): Նպատակը պետք է լինի հանրային վստահության ձևավորումը և գործընթացի թափանցիկության ապահովումը: Դրա համար առաջարկվում է՝ այնպիսի	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն:	

		գործունեությունների համար, որոնք պարունակում են բնապահպանական կամ առողջապահական զգայունություն, նախատեսել հանրային քննարկման և ազդեցության գնահատման պարտադիր գործընթաց: Առաջարկվում է, որ այս գործընթացը իրականացվի օրենքով սահմանված հասարակական խորհրդակցությունների ձևաչափով՝ տեղական համայնքների, բնապահպանական ՀԿ-ների և անկախ փորձագետների մասնակցությամբ:		
8	Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ 28.03.2025 12:47:24	2. Տաքսոնոմիայի շրջանակում բազմաթիվ գնահատումներն ու որոշումներն իրագործվում են «որակավորված ստուգողների որոշմամբ», սակայն այդ վերիֆիկատորների որակավորման, հավատարմագրման և վերահսկողության մասին նախագծում հստակ դրույթներ չկան: Սա կարող է շահարկումների, ոչ օբյեկտիվ գնահատումների և գործընթացների խափանման պատճառ դառնալ: Նպատակ ունենալով երաշխավորել վերիֆիկացիայի թափանցիկությունը և տեխնիկական	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունը կքննարկվի:	

		հիմնավորվածությունը՝ առաջարկվում է մշակել առանձին ընթացակարգ՝ սահմանելով վերիֆիկատորների անկախության սկզբունքը, նրանց հավատարմագրման չափանիշները, վերահսկող մարմինը և բողոքարկման մեխանիզմները: Այս համակարգը կարող է հիմնվել պետական պատվերով իրականացվող վերապատրաստումների և մասնագիտական կառույցների մասնակցության վրա:		
9	Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն ՀԿ 28.03.2025 12:47:24	1. Նախագծում բազմաթիվ գործունեության տեսակներ դասակարգվել են որպես նպաստող (Ն) կամ անցումային (Ա), սակայն դրանց զգալի մասը չունի տեխնիկական համապատասխանության հստակ չափանիշներ: Օրինակ՝ գյուղատնտեսական հողերի կառավարման վերաբերյալ գործողություններից մի քանիսը (օրինակ՝ «Հողերի վիճակի և որակի վերաբերյալ տեղեկատվության մշտադիտարկման համակարգի մշակում») նշված են որպես նպաստող՝ առանց չափելի արդյունքի: Այսպիսի ձևակերպումները կարող են խոչընդոտել ծրագրերի	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն և կքննարկվի:	

		գնահատումը, ֆինանսավորում ներգրավելը և իրական ազդեցության վերլուծությունը: Հետևաբար, անհրաժեշտ է ներդնել պարտադիր մեխանիզմ, որի միջոցով մինչև 2026 թվականի երկրորդ եռամսյակ կսահմանվեն տեխնիկական համապատասխանության հստակ չափորոշիչներ բոլոր այն գործունեությունների համար, որոնք ներկայումս չունեն այդ չափանիշները: Այս քայլը պետք է ուղեկցվի նախարարությունների կողմից մշակված ոլորտային ուղեցույցներով և ստանդարտներով՝ ինչպես նշված է նախագծի վերջին բաժնում. «նախատեսվում է մշակել համապատասխան ուղեցույցներ, այդ թվում՝ էներգետիկայի ոլորտի տեխնիկական համապատասխանության չափանիշները և հանքարդյունաբերության ոլորտի ուղեցույցներն ու ստանդարտները»:		
10	Գևորգ Նազարյան 20.03.2025 10:19:03	Հավելվածի 4 կետում սահմանված բնապահպանական նպատակները թերի ու սխալ են ձևակերպված: Այսպես՝ 4 կետի 4) ենթակետում բերված անտառները,	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն և կքննարկվի:	

		կենսաբազմազանությունը ու էկոհամակարգերը տարբեր հասկացություններ են, դրանք չեն կարող ընդգրկվել միևնույն նպատակի մեջ: Բացակայում են այնպիսի կարևոր նպատակներ, ինչպիսիք են՝ մթնոլորտային օդի որակի բարելավումը, թափոնների կառավարումը, ընդերքի բնական ռեսուրսների կայուն օգտագործումը և կառավարումը և այլն:		
11	Գևորգ Նազարյան 20.03.2025 10:19:03	2. Հավելվածի 3-րդ կետում նշված ռազմավարական նպատակները չափազանց լղոզված ու անհասկանալի են, մասնագիտորեն սխալ են ձևակերպված: Օրինակ՝ պարզ չէ թե ինչ "ռեսուրսների" մասին է գնում խոսքը (բնական, աշխատանքային, կրկրնօգտագործվող), կամ "կանաչ աշխատատեղը" որպես նպատակ ինչ է ենթադրում, քանի որ աշխատողների առողջությունն ու անվտանգությունը դեռևս չի բնորոշում աշտատեղը որպես կանաչ և այլն:	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի գիտություն և կքննարկվի:	
12	Գևորգ Նազարյան 20.03.2025	1. Նախագծում օգտագործվող մի շարք տերմիններ սահմանման կարիք ունեն: Օրինակ՝ "տաքսոնոմիա", "կանաչ	Շնորհակալություն առաջարկության համար: Առաջարկությունն ընդունվել է ի	

	10:19:03	ծրագրեր", "նպաստող ծրագրեր", "անցումային ծրագրեր", "շրջանաձև տնտեսություն", "ռեսուրսներ", "կանաչ աշխատատեղ", "կանաչ բնակավայր" և այլն:	գիտություն:	